



22. ՔԱՀՎԱԽ ԹԱԹՈՍԻ ՆԱՂԱԼԸ

Կըլի, չիլի, մե կեղի մեջ մե մարթ կըլի, անունը՝ Թաթոս: Էտ Թաթոսը էնքան վախկոտ կըլի, էնքան վախկոտ կըլի, որ, ամոթ ասել, չի էթա տուսը իրան խըմա փեշավ անելու: Ըմմըն օր կնիկը կրտանի դարը տուսը կըքաքեցուցի... Տար խըմա յէլ անունը կըտնեն Քահվախ Թաթոս: Դը յարի տես, որ էտ քաֆր օղին ուր էտ վախկուրթունի գյորա էնքան լոբբազ ի, էնքան կլոխը կովող, շատախոս, որ էլ ասել չեմ նալի: Ըմմեն վախտ որ կնիկը տյուս կըտաներ քշերը փեշավ, Թաթոսը պազզած տեղը կրտառնար կնդան, թե. «Կնի՛կ, ինչ քարվան կոելու քշեր ի՛մ, այ սիրտս ասելի՛ ե՛լ, քել գյաղոզները կոի՛, եկած քարվանը կոի՛, պե լի՛ց տունտ, որթեց որթի կե»... Էտենց վախտեր կնիկը ասես էր. «Քաքի՛, քաքի՛, քո ոոր քարվան կոռղի ոռ չի...»:

Մախսաս էտենց ըսնես էր ժամանակը: Սաղ տան ջավրը ինցած էր խեխճ կնդա զգին, Քահվախ Թաթոսը նա՛ պանի ի, նա՛ կոռծի, խեխճ կնդա տաղը-դաղը լվասկ անելու, յա խաց թխելու ձակկով պիրած ախշատանքը ուտելի, մե կլոխ բաշլամիշ ի անելի տարտակ զավզակամիշ ընել:

Մի քշեր էլ ամառ ի, լուսնակը լո՞ս, Թաթոսը՝ թե.—Կնի՛կ, չես էթալի տո՞ւսը, իլյամ խետըտ չըվախենաս...

Կնիկը դար խասյաթը գինաս էր, Էտենց ասելուն գինաս էր, որ մարթը փեշավի էթալի, ամմա իրան չի կոռելի, թե գյուվա տսեք հալ, ես էլ տղամարթ եմ...

Ամմա կնդա էնենցի ջանին խասսե, ելավ, ելավ մարթին տարավ, նստեցուց փեշավ, Թաթոսը էլը ըսկսեց. «Ծփ, ծփ, ծփ, ինչ արթար, լուսնակը լոս քըշեր ի է՛կ, սատանան ասելի՛ Թաթո՞ս, ելի թուրըտ կապի՛, քել ճամիսըները կըոփի՛, իշքան բազրգան կա, թամ-զին թալընի, պե լի՛ց տունըտ...»:

Կնդա խորուն խասսեր էր, էլ չիմացավ տանել տուր զավզագը-թոնը, հայտե մե թափոդ տվեց Թաթոսի մեշկեն քցեց ուր քաքի մեչը.—Դե ծենստ, թամբա՛լ, հարամկեր վախկո՞տ շան որթի, ուր

Հալին էլ չի, դե քելի քարվան կըոփի', էլ ընձի քեզի պես իրիկ հարկավոր չի, տու իմ խորին կերար, աշար...

Ասեց կնիկը, մտավ տունը, տուռը փակեց:

Թաթոսը ընչանք հուշը էկավ կլոխը, տսավ կնիկ չըկա, ելավ քարթաթախ փազավ, կպավ տուանը.—Այ հավար կնիկ, տուռը պա՛ց, կելերն էկան, մըկը ընձի կուտին...

Էնքան բոռոաց, ճոռաց, կնիկը տուռը չըպացեց.—Կուրսըվի քելի',—ասեց, —ընձի քեզի պես մարթ պետքը չի:

—Դը աղեկ, կնիկ, —ասաց Թաթոսը, —ես տղամարթ եմ, այը մեկ էլ քյո իրեսը իշկացի՞մ...

Ասաց Թաթոսը, քշերը քնավ փթրոցի մեջը, լոսը պացվավ, ելավ պակեն մե մազե չաթու ունիներ վերցեց, ծալեց տրեց ծոցը, ճամբախը խառնեց տեմը կնաց: Քահակս Թաթոսն էր շատ կնաց, քիչ, մե կեղի մեշե ըսնես էր, տսավ փահեչի կողնի վրան մե խավ քներ ի, ծեռը թալեց, որ պոնի, խավը թոռավ, տակը մե ծու մնաց, ծուն էլ վերցեց տրեց ծոցը: Կնաց, կնաց, խասսավ մե կետի, մտավ ընցավ, տսավ կրյան-կոռտերը վազնես են, որ ուրենցը թալեն կետը, Թաթոսը մե եքիա կրյան-կոռտ պոնեց, տրեց ծոցը: Կետն ընցավ, Թաթոսը շատ կնաց, քիչ, ինգավ մե չոլ բիյաբան անվերվերեք տեղ: Մեկ էլ տսավ՝ մե չիմանցյահի մեջը մե ծառ կա, ծառի տակն էլ ախապուր: Թաթոսը կնաց էտ ախապի ճրեն խմավ, կլուխը տրեց տաղ, քնավ: Շատ էր քնի, թե քիչ, չիմնալի, տու մի ասա, էտ չիմանցյահը օխտը դեերին ի, տանք ելան ըշկացին՝ ինչ, ուրենց չիմանի ախապուրի վրան մե դարավթույի էրևալի: Ելան դեերը էկան, տըսան՝ ինչ. մե ճղուկ մարթ ի քընե տաղ:

Ոտավ բրթի, թե. —Էյ, էյ, ել ըշկանք, ի՞՞շ մարթ ես:

Թաթոսն էր աշկերը պացեց՝ ի՞՞նչ. օխտը դե կլիմի վրան կայներ են, ախու քիչ մնաց, որ սիրտը պատուվի... Ամմա վախսկոտը ֆանտով կընի, ասեր էր. «Ղարատան առթըղ բոյազ օլմազ»⁶:

Թաթոսն էր ելավ նստավ, թե. —Ի՞՞նչ եք ասելի:

Ճոչ դեր՝ թե. —Մենք քշերով ենք մարթ պտուտելի, որ ուտենք, տու ցերեկով ինգար մեր ծեռը, ել էթանք, քեզի պետք է ուտենք:

Թաթոսը՝ թե. —Այ ծեր մերը չըմեռնի, մուղա՛թ մնացեք, ես ձեզի չուտեմ:

Դեերը զարմացան, ըշկացին մեյմեկու էրես, թե՝ իշթար որ...

Թաթոսը՝ թե. —Յարիք մեր զուվաթները ջոքենք, վարըս շատ դուվաթով ըլնի, էն դարը ուտի:

Դեերը՝ թե՝ լա՛վ:

6 Սկը սպիտակ չի դառնա (Ծ. Կ.):

Թաթոսը ասեց. — Խանեք ծեր թևի տակի մազը տսնամ՝ ինչքան էրկեն ի:

Դևերը խանին՝ մե զյագ: Թաթոսը խանեց ծոցեն մազե կապը, ինչ՝ տասսը զյագ:

Ետով Թաթոսը՝ թե. — Խանեք ծեր ոճիլները տսնանք՝ ինչքան եքիս յեն:

Դևերը խանին, ոճիլը՝ մե մկան չանք:

Թաթոսը ծեռով թալեց ծոցեն կրյան-կոռոտը խանեց, մե՛ե՛ եքքա ջանավար: Տաղ էլ դևերը ախտվան, դե իրեք անքամը տըկը թըմմի ալսր:

Թաթոսը՝ թե. — Տուք դև եք, շա՞տ դուվաթով եք, առեք էտ քարը ծեռով ձխտե՛ք, ըշկանք՝ գինա՞ք ծեթ խանել:

Դևերը վերցին քարը ձխտեն, մշրվավ, էլավ ավագ, ամմա հուրի, քարեն ինչի՞ տըկը ծեթ ըլնի որ:

Թաթոսը վերցեց մե քար, կողնեկ ծոցեն ծուն խանեց, քարի խետ պոնեց ափերի մեչը, ձխտեց, ծեթը շոշուալով թափավ ցած. — Դե՛, — ասեց, — մըկը ե՞ս եմ դուվաթով, թե՞ տուք...

Դևերը էտ պանը որ տսան, օխտով էլ իրեսի վրա փուվան Թաթոսի առաջը, թե. — Ախապե՛ր, ներող կըլնես, մենք քեզի չենք էր ճաշնալի, դը որ էտենց դուվաթի տեր ես, տարին ետ տու ճոչ ախտեր, մենք՝ փատիկ:

Դևերը վերցին Թաթոսին փեշտ հա փեշտով տարան ուրենց դալայշան: Դարեն ետ ըսկմեն դևերը ավ անել, պերել, Թաթոսն էլ խետերը կերապ-խմավ, քեֆ արեց:

Էտենց մե մուղաթ ընցավ, մըկը վառելու ցախը դևերը նորաթով են պերելի, էկավ, ցախ պերելու նորաթը խասավ Թաթոսին, թե. — Ախապե՛ր, էսօր ցախ պերելու նորաթը քոնն ի:

Թաթոսը՝ թե. — Ի կըլի, վնաս չունի, դե պերեք ըշկամ՝ իշ չաթու-մաթու ունեք:

Պերին խսուն զյազանոց մե չաթու, Թաթոսը՝ թե. — Էտ չելավ:

Պերին խայիր զյազանոց, էտ էլ ասեց՝ չելավ:

— Բը, — ասին, — քանի՞ զյազանոց պերենք, այ ջանըմ, — ասին:

— էնենց չաթու պերե՛ք, որ սաղ էտ մոշայի երգերը փաթրթիմ, ծունգս տամ քյաշիմ, սաղ մոշան քյոքախսան անեմ, թամմըզ իշքան որ կա, պերեմ, որ խայիր տարի վառեք չըպողնի...

Դևերը զախախորեն. — Տո, ջա՞նըմ, — ասին, — իշթար մոշան քո-քախսան անես, թամմըզ զունը-ջանավար կըփախնեն, կէթան, կըցրն-վեն, էլ մենք դո՞ր ավ անենք, մեր կըոխը պախենք: Զէ՛, ախապե՛ր, պետքը չի քո պիրած ցախը, տու ցախի մի՛ քել, մենք կըպերինք...

Թաթոսը էտ խետեն էտ մհանայով պոծավ:

Մնաց մե ժամանակ էլ ընցավ, դև ախպերներեն մեկը տառցավ ախպերներին, թե.—Շատ էլ Թաթոսը ճոչ ախպեր ի, մեղի խետ մեր պունած յա զարկած ավը որ ուտելի, էն էլ տըկը մեղի խետ իկյա, ավը-դուշ անի:

—Դե՛, ախպե՛ր Թաթոս, —ասին, —տըկը իկյաս մեղի խետ, կանոխ էմանք ավը-դուշ անենք:

Թաթոսը՝ թե.—Ի՞շ կըլի, շատ աղեկ, շատ պարի, էթանք: Դե ընձի գյորա էլ գյուռով պերեք, որ ես էլ իկամ:

Դևերը պերին մե գյուռով՝ օխտը փութ:

—Էտ ի՞նչ ի, ընձի վրա եք ծղզալի, —պարկացավ Թաթոսը, —ընձի տղայի տիղ եք տըրի՛, ես էտ գյուռզը էրկու մատով կըպոնիմ կըթալիմ էթա ախշրքի ծերը...

Կնացին մե ուրիշը պիրին՝ քառառն փութ:

—Էտ էլ չելավ, —ասեց, —էտ էլ թեֆտըր ի:

Դևերը զարը-զարմանք մնացին: Ի՞նչ անեն:

Կնացին ուրինց աթա-բաբային մնացած մե գյուռով կար, դուզ խայիր փութ էր, կնացին տհաքալով էտ խայիր փթանոցը պիրին, տրին Թաթոսի առաջը. —Էտ վնաս չունի, —ասեց Թաթոսը, —էլը ընձի գյորա չի, թեֆտըր ի, ամմա զը ինչ արած, որ ուրիշը չունինք: Դե ելե՛ք, —ասեց, —ելե՛ք էթանք ավը-դուշ:

Ասին. —Դը գյուռզ վե՛րց, էթանք:

Թե. —Բը էլ ի՞նչ ճոչ ախպեր, որ գյուռզը ես պետք ի վերցիմ: Խորիներտ ընի, տուք վերցեք խասուցե՛ք ավի տեղը, նոր ես գինամ՝ ինչ կանեմ:

Դևերեն մեկը ճոչ գյուռզը վերցեց, կնացին...

Դևերը խայիր փթանոց գյուռզը լկին, խասուցին ավատեղ, Թաթոսը ալրիալը աշկով չափեց-ձևեց, թե դոր կըտը փախնող ավերի նախիրը ըսնեն, դարը գյորա ասեց՝ խանեք էտ գյուռզը տրե՛ք ծորի դոշը էտ յամաջ տեղը, թո մնա, յամաջի տակեն գեչար ճամբախն էր, դևերը որ մնեն էր ծորի մոշան, հայ-հու անեն են, խունան ավերը, էլ տեղ չըկար, պետք է էտ ճամխով փախնեն էր:

Գյուռզը տրին, Թաթոսը նստավ մոտը, դևերին ասաց. —Դե քելե՛ք, —ասեց, —քելեք խունեացե՛ք, թո իկյան:

Դևերն էր լսվան մոշան, բաշլային, թե ավ անել, թե հարայ-հրոց տնել, որ ինչ ի մարալ, ջեյրան, լաշին, վրեն ոխչար, յա քարի էծ, ինչ-քան կան, խունեն, մոշայեն տյուս իկյան: Մեկ էլ Թաթոսը տսավ, ինչ, յամաջի ճամբախը սեւուն ի տալի ավի ծեռեն, էնենցեն իկյալի, որ մեյմեկու տաս են ոտի տակ: Հենց որ նախիրը խասնելի Թաթոսի դուզեն, գյոզն յաման գյորմասըն Թաթոս, ոտերը դայաղ անե-

լի զյուռզին, մեշկը տալի կետինը, ոժելի, ոժելի յամաջեն զյուռզը զլդորելի թեխ ավի նախիրը: Դե խայիր փթանոց զյուռզը ի՞շ կըլի, ղաղախի-դուղբաթ անտեր զյուռզը էլ էթալի հենս նախիրի էն սըխ տեղը զարկելի, էնենցի կոտորելի, էնենցի կոտորելի, որ ես ասիմ խայիրը, տու ասա խազարը... Զինքը Թաթոսը էտ որ տսնալի չէ, ասելի՝ տար տակին էլ էլամ, արխային էնելի, մեշկի փրա պառզվելի:

Մեկ էլ տսնալի դևերը իկան.—Բա, ախապե՛ր, ի՞նչ իս արի:

Թե.—Կնացեք ձեր աշկով տսե՛ք:

Դենքը էթասին ծորի ճամբախը, ինչ ջանդագ ջանդրգի յի սով-քանմիշ էլե: Մալխաս ուրախանաս են:

Խազուցես են.—Բը, ախապե՛ր, զյուռզը ի՞նչ էլավ:

Թե.—Գյուռզը թեֆտը էր, թալիմ, էտ անասունները կոտորեց:

Ընցավ թափի խետը, ըսկի չիմնալի, վար թունը-թափասեն կնաց... Դենքը զահա ավել ըսկսես են վախենալ Թաթոսեն: Նլկես են ավերը պերես են տուն: Զինքերը մե տարվա մեջ էտքան ավ չէ կերնա անել:

Պերես են, ուտես են, խմես են, միառժամանակ էլ ստայե ըսնելի, մեկ օր էլ դևերեն մեշկը՝ թե.—Ախապենե՛ր, յարեք մե ֆանտով էտ ատամվորթու խոտը կոենք, վերչ-ախըրը տարեն մեզի զարար կիլսա:

Մեկէլները՝ թե.—Բա իշթա՞ր անենք:

Էտ մեշկը՝ թե.—Կանոխ քչեր որ կըքընի, քունը կըտանի, ըլենք մե կանթուն դազան ճուր տահցուցենք, պերենք քնած տեղը լցենք վրան, թո հենց մե խետ խաչվի, մեռնի պոզնի էթա...

Էտենց մաալհաթ անես են, քնես են դևերը: Դը յարի, որ Թաթոսը տանց ըմբեն ասածն էլ լսելի, դե դևերի մեյմեկու խետ փափսալու ծենը կէթա ընչանք մե վեռատ տեղ: Թաթոսը օյաղ ի մնալի: Մեկէլ քշերը Թաթոսը քնելի, դևերը հենց որ տսնաս են՝ քներ ի, ըլես են օջաղը քոքես են, կանթուն դազնով ճուրը տնես են վրան, իկաս են քնես են, զյուվա Թաթոսին խափս են տալի: Ամմը Թաթոսը էնենց աղվուլ չի: Թաթոսն ի ըլելի տեղեն, յորդանի տակը մե քոթուգ ի տնելի, կլսի տեղը պանը էնենց ի սարքելի, որ ախմախ դևերը պանի Փահմ չունեն, զինքը էթալի, ցախերի քամակը փախսկըվելի: Քշերվան մե վախտը դևերը ըլես են, տսնաս են՝ ճուրը կծոռ-կծոռ եռուալի: Լլես են պոնես են զազնի օխտը կանթերեն, պերես են, յալլա բարամ, սոճես են Թաթոսի վրան:

—Էտ ի Թաթոսը խաչվավ, էփավ, մեռավ,—ասես են, —յարեք քնենք, առատունը միսը կուտենք:

Էթաս են, քնես են: Մե քիչ վախտ ըսնելի, ճուրը-մուրը ցամքելի, Թաթոսն իկասի խանելի տեղի մեչեն, քյոթուզը թալել ի էնթե,

զինքը մնելի յորդանի տակը կզկվելի, մի թահը քնելի սաքի: Առատունը դևերը ըլես են ըշտահով, որ Թաթոսին ուտեն, մեկ էլ տսնաս են՝ Թաթոսը պուպուզ ելավ նստավ տեղի մեջը:

Նստավ.—Տղնե՛ր, —ասեց, —չիմնալի մոսեր եմ, թե ինչ բաս ի, էս քշեր էնենց եմ քըռնե, որ, մե տեսեք հալա, յորդան-դոշագս էլե ճուր...

Դևերը լափ սարսափես են. —Էտ իշ պան ի, Ասվա՛զ, —ասես են, —մենք եռման ճուրը լցեր ենք վրան, էն ասել ի՛ քըռներ եմ...

Մե քյան օր ետով էլը դևերը մասլը աթ են տսնալի, որ Թաթոսի կլոխը ուտեն: Էս խետին դանք որոշես են՝ Թաթոսը քնելեն ետ վերցեն թրերը, հենց յորդան-դոշագի մեջը փոթեն, անեն բալաժորիկ: Դևերը քշերը իշ մասլը աթ որ անես են, Թաթոսը բուսայի քաշելի, լսելի թամմրգ: Մեկէլ քշերը Թաթոսը քնելի, իրան սութ քուն ի տալի, դևերն էլ են քնելի, Թաթոսը, հենց որ տսնալի՛ դևերը խոռացին, ըլելի, մե քոթուգ պերելի պառզվեցուցելի տեղի մեջը, յորդանը քաշելի վրան, զինքը էթալի, փախկվելի ցարը-ցախի քամակը: Դևերն են քշերվան կեսին դառնեն են, քաշես են թրերը, Թաթոսի շորերի երգերը շարվես են, դե տու որ կըտաս, էնքան տաս են քոթուգն ան յորդան-դոշագը ըլես են բալաժորիկ: Ետով քաշվես են հարվավ ուր տեղը քնես են: Թաթոսը տսնալի, որ քաշվան-կնացին, փախկրված տեղեն ըլելի, իկալի, քոթուգի տարը-տաշեղները մե յան ի քաշելի, մնելի խազար կտոր տառցած յորդանի տակը քնելի:

Առատունը դևերեն չուտ ըլելի, ծեն ի տալի, թե. —Տղնե՛ր, ելե՛ք, էս քշեր, —ասելի, —ես ըսկի չեմ քնե, —ասելի, —չիմնալի լո՞ւ էր, ոճի՞լ էր, ի՞նչ էր: Ընչանք լու ընձի կծեր են, ըսկի չեն թողե, որ խանգստանամ:

Ախմախ, աղլիքյամ դևերը էտ անքամին էլ զարմանաս են. —Տո՛, —մեյմեկու ասես ես, —մենք խազար թուր ենք էշե դար ջանին, էն ասելի՛ ընձի լու յի կծե, բա էլ ի՞նչ անենք մենք՝ տարեն պոզնենք...

Միտք են անելի, միտք են անելի, վեռչը ճոչ ախպերն ասելի. —Տղնե՛ր, յարեք ասենք, թե պամնըվես ենք, ի՞շ կա որ, ախպերը կըպամնըվի, էլի: Ասենք, պամնըվես ենք, վերցենք ուր փայը, ինչ կըխասնի, տանք, թո թողնի, կուրաըվի էթա, մեր յախան դինջանա:

Մեկէլ օրը Թաթոսին՝ թե. —Ախպե՛ր, զինաս ես՝ իշ կա՞:

Թե՝ ի՞շ կա:

Թե. —Մենք ախպերներով ուզես ենք պաժընվենք:

Թե. —Իշ կըլի, շատ աղեկ:

Պերես են, ինչ ունեն, չունեն, մալ-զանք, խազինա-դախինա պաժենես են, Թաթոսին խասնելի մեկ եքքա կորն պաժին:

—Դե', —ասես են, —վե՛րց քո պաժինը, քե՛լ:

Թաթոսը՝ թե. —Ախր աղվորթ են ասի՛ դև ասկը ախմախ կըլ-նի, բը իշո, ես էտքան վախտ ձեզի ճոչ ախսպերթոն անեմ, ձեզի պախեմ, շախեմ, մայս էնքան էլ ամագ չունեմ ձեզի վրա, որ իմ ապրանքը շկե՛ք, խասուցե՛ք իմ տունը:

Դեերը տանաս են, որ աղվորթ ի ասելի, փստիկ դկին պառնաս են սաղ Թաթոսին խասած ապրանքը, Թաթոսն էլ ծեռ ծեռիյի տա-լի, մնաս պարկի ասելի, նստելի ապրանքի վրան, դկը շկելի, պիրե-լի թեխս տանց կեղը: Իկաս են, խասնես են կեղի երգը, Թաթոսնց կեղը մե չառչի ջհուդ ի ըլելի, Թաթոսը տանալի էտ ջհուդը՝ նստե կեղի ցածը ծառերի տակը, պարկ տալի, ըսնելի: Ջհուդը միտք անե-լի, ասելի՛ տաղ մե պան կա: Սարը անելի, ընչանք դկը Թաթո-սին ինան ուր ապրանքը տանելի խասուցելի ուր տունը, տառնալի իկալի, ջհուդը դկին խառուցելի, թե՛ էտ ի՞շ բաս էր:

Դեը ասելի, թե՛ էտենց, էտենց:

Ջհուդը՝ թե. —Քո տունը քանտվի, էն ձեզի խափիր ի: Էնիկ էնքան վախկոտ ի, որ դարը ասես են Քահվախ: Քելի էթանք, ես դար սութը խանեմ, դու ձեր ապրանքը վե՛րց, տա՛ր:

Դեն ասելի. —Այս սութ չես ասելի, պե՛ թեստ կապիմ իմ թեկն, որ չըփախնես:

Ասելի՛ աղեկ:

Կապես են, էթաս են թեխս Թաթոսենցը:

Թաթոսը տուոր նստած ի ըլիցի, հենց որ տանալի՝ դկը տառցավ ջհուդի խետը, ալբալը իմաննալի՛ պանը ինչ ի, ծեն ի տալի. —Ա՛յ ջհուդ, —ասելի, —քո խերը իմ խորը օխտը դև իր պառք, էտ մեկը, բը վեցցը ե՞փ ես պերելու:

Դեը, որ էտ լսելի, ետ ի տառնալի, իշո կըփախնի... ընչու խաս-նելի ուրենց տունը, տանալի՛ ջհուդի թեք ուր թեկն կախը-կախ:

